ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

22 դեկտեմբերի 2020թ. կնքված N ՀՌՀ-ԳՀԾՁԲ-20/28 գնման պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

ք. Երևան «10» **փետրվարի 2021 թ.**

«Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով»-ը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս. Խաչատրյանի, որը գործում է հանձնաժողովի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ռադիոկոնտրոլ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Մ. Վարդանյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, երկուսը միասին՝ այսուհետ «Կողմեր», ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 22 դեկտեմբերի 2020 թ. կնքված N «ՀՌՀ-ԳՀԾՁԲ-20/28» գնման պայմանագրի՝ այսուհետ «Պայմանագիր» 4.1, 4.2, 7.5 և 7.15 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

Հետագա համագործակցության նպատակով Կողմերը որոշեցին.

1.1 Համաձայնագրի (պայմանագրի) պայմանները կիրառվում են պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում պայմանագիրը կնքելուց հետո մինչև դրա հիման վրա համաձայնագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումն իրականացվում է այդ համաձայնագիրը, ինչպես նաև պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

1.2 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման վճարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելված 1-ի (կցվում է):

1.3 Սահմանել, որ Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ մնում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է **2 (երկու)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն Համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով ք. Երևան, Իսահակյան 28 ՀՀ ՖՆ գործառական վարչություն Հ/Հ 900011057016 ՀՎՀՀ 02556422 ---------- (ստորագրություն) Կ.Տ	«Ռադիոկոնտրոլ» ՍՊԸ ք. Երևան, Այգեստան 9-րդ փ., 115 տուն «Ամերիաբանկ» ՓԲԸ Հ/Հ 1570018909280100 ՀՎՀՀ 00131598 ---------- (ստորագրություն) Կ.Տ

Հավելված N 1
«22» դեկտեմբերի 2020 թ. կնքված ՀՌՀ-ԳՀԾՁԲ-20/28 ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
« 10 » փետրվարի 2021 թ.կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
Հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջնանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79311100/503	Լսողական ծրագրեր հեռարձակողների եթերիների ուսումնասիրությունների (մոնիտորինգի) իրականացման ծառայություններ	-	100000	200000	300000	400000	500000	600000	700000	800000	900000	1000000	1200000	1200000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հեռուստատեսության և ռադիոյի
հանձնաժողով
ք. Երևան, Իսահակյան 28
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
Հ/Հ 900011057016
ՀՎՀՀ 02556422

(ստորագրություն)

Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Ռադիոկոնտրոլ» ՍՊԸ
ք. Երևան, Այգեստան 9-րդ փ., 115 տուն
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570016900280100
ՀՎՀՀ 00131598

(ստորագրություն)

Կ.Տ